«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտոր
_____ Մ. Մուրադյան
«___» _____ 2026 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝ Հրանտ Արմենի Սարկիսովի՝ «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնը, մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու Լ. Ա. Ղազանչյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Գևորգյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու Ա. Ա. Խառատյանի և Ա. Գ. Սաֆարյանի, քննարկեց Հրանտ Արմենի Սարկիսովի՝ «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները» թեմայով ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունն ամրագրել է Անվտանգության խորհրդի բացառիկ առաքելությունը (սահմանել պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները)՝ մանրամասն կարգավորումները թողնելով «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին», ինչպես նաև «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներին: Ըստ էության՝ անվտանգությանը, տարածքային ամբողջականությանը և սահմանների անձեռնմխելիությանը վերաբերող հարցերի

սպառիչ քննարկմամբ լիարժեք հնարավոր չէ արտացոլել Անվտանգության խորհրդի լիազորությունների բարդ բովանդակության շրջանակը, որն ունի գործնական մեծ նշանակություն:

Հաշվի առնելով անվտանգային հիմնահարցերի լուծման առաջնահերթությունները արդի ժամանակահատվածում, ինչպես նաև Անվտանգության խորհրդի գործառութային նշանակությունը սահմանադրական քաղաքականության և միջազգային փորձի վերլուծության համատեքստում՝ հեղինակը սույն աշխատանքի շրջանակներում փորձել է իրականացնել համալիր գիտագործնական հետազոտություն՝ ուղղված Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրների ուսումնասիրությանը:

Թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ինը ենթագլխից, եզրահանգումներից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի այսպիսի կառուցվածքը, ընդհանուր առմամբ, համահունչ է այն խնդիրներին ու նպատակներին, որոնք իր առջև դրել է հեղինակը:

Աշխատանքի ներածության մեջ հիմնավորվում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվում են թեմայի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, նպատակը, արդյունքների փորձարկումը, աշխատանքի կառուցվածքը, տեսական և նորմատիվ հիմքը, ատենախոսության գիտական նորույթը, ինչպես նաև՝ պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները:

Ատենախոսության առաջին՝ «Անվտանգության խորհուրդը միջազգային պատմական զարգացման համատեքստում» վերտառությամբ գլխում հեղինակը տեսական, իրավական, պատմական վերլուծությունների համատեքստում ներկայացրել է Ազգային անվտանգության խորհրդի՝ որպես պետական ինստիտուտի ծագումն ու զարգացումը Ամերիկայի Միացյալ Նահանգներում, Մեծ Բրիտանիայում ու Հյուսիսային Իռլանդիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում:

Ատենախոսության երկրորդ գլուխում, որը կրում է «Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի ստեղծման հիմնախնդիրները» խորագիրը, լուսաբանված են Անվտանգության կամ Ազգային անվտանգության խորհրդի ծագումն ու զարգացումը Հայաստանի երրորդ հանրապետությունում, մեկնաբանված է Անվտանգության խորհրդի կազմավորման կարգն ու կառուցվածքը, ինչպես նաև Անվտանգության խորհրդի կողմից ընդունված ակտերի տեղն իրավական համակարգում:

«Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի փոխհարաբերությունները պետական մեխանիզմի հետ» վերտառությամբ երրորդ գլխում հեղինակը հանգամանալից ներկայացրել է Անվտանգության խորհրդի կայացրած որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության հիմնախնդիրները, քննարկել է Անվտանգության խորհուրդի դերակատարությունն ազգային անվտանգության բնագավառը կարգավորող իրավաստեղծ գործունեության շրջանակներում, մեկնաբանել է Անվտանգության խորհուրդի կարգավիճակը Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության համատեքստում:

Ատենախոսության եզրափակիչ մասում շարադրված են հետազոտության կատարման արդյունքում հեղինակի եզրահանգումները:

Գիտական հետազոտության վերաբերյալ ընդհանուր առմամբ դրական կարծիքի հետ մեկտեղ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները՝

1. Հստակության տեսանկյունից վիճահարույց է պաշտպանության ներկայացվող հինգերորդ դրույթը: Մեր կարծիքով, հեղինակի կողմից գործադիր գործառույթներ իրականացնող Անվտանգության խորհրդին իրավաստեղծ գործունեությանը մասնակցելու լիազորություն վերապահելը որոշակիորեն կարող է սասանել իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, և խաթարել օրենսդիր ու գործադիր իշխանությունների միջև սահմանադրական գործառութային հավասարակշռությունը: Ավելին, Անվտանգության խորհուրդը, իր սահմանադրաիրավական կարգավիճակով և էությամբ, հանդիսանում է կոլեգիալ մարմին, որի հիմնական առաքելությունը պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունների վերաբերյալ որոշումների կայացմանը նպաստելն ու խորհրդատվություն տրամադրելն է: Նման մարմնին իրավաստեղծ գործունեությանը մասնակցելու լիազորություն վերապահելը կարող է հանգեցնել գործառույթների կրկնորդման:

2. Հարկ է նկատել, որ ատենախոսության երրորդ գլխի առաջին՝ «Անվտանգության խորհրդի կայացրած որոշումների կատարման նկատմամբ վերահսկողության խնդիրները» ենթագլուխը բովանդակային առումով երկրորդ գլխի երրորդ՝ «Անվտանգության խորհրդի կողմից ընդունված ակտերի տեղը իրավական համակարգում» ենթագլխի տրամաբանական շարունակությունն է: Մեր դիտարկմամբ՝ վերոնշյալ ենթագլուխները համակարգային առումով փոխկապակցված են, և վերջիններիս համադրված վերլուծությունն առավել նպատակահարմար է ներկայացնել մեկ ենթագլխի շրջանակում:

3. Մասամբ թերի է ատենախոսության գրականության ցանկի ձևավորումը: Մասնավորապես՝ գրականության ցանկում ընդհանուր առմամբ բացակայում է նշված աղբյուրների հղումների համարակալման և դրանց էջերի տեղադիրի վերաբերյալ պատշաճ տեղեկատվությունը, իսկ «Դատական պրակտիկայի նյութեր» բաժնի աղբյուրներում նշված չեն հասանելի պաշտոնական աղբյուրները և էլեկտրոնային ռեսուրսի օգտագործման վերաբերյալ պատշաճ գրառումները:

Ներկայացված նկատառումները կրում են մասնավոր բնույթ, պայմանավորված են աշխատանքն առավել որակյալ տեսնելու ցանկությամբ և չեն արժեզրկում ընդհանուր առմամբ հաջողված ատենախոսությունը:

Հետևություն. Հրանտ Արմենի Սարկիսովի՝ «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, որը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանների շնորհման կարգը և չափանիշները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Հրանտ Արմենի Սարկիսովը, արժանի է իր կողմից հայցվող՝ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին՝

ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» (սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում) մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Հրանտ Արմենի Սարկիսովի՝ «Անվտանգության խորհրդի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնախնդիրները» խորագրով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի պետ Ա. Գ. Սաֆարյանի կողմից:

Քննարկվել և հավանության է արժանացել ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի 2026 թ. հուլիսի 14-ի նիստում, արձանագրություն՝ թիվ 14:

Ամբիոնի պետ՝ Ա. Գ. Սաֆարյան

Ա. Գ. Սաֆարյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի պրոռեկտոր՝ Ա. Է. Սուքիասյան